



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



76

2

L-85

my. 26

2010



# ԼՍԱՐԱՆ

ԿԵՆՑԱՂՕԳՈՒՏ ԳԻՏԵԼԵԱՑ

Ա.

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

ԳԱՍ ՎԵՇԱՍԱՆԵՐՈՐԴ



ԻԹԷՆԴՈՍԻԱ.

Իսպարսանի Խաշիպեան Ուսուսնարանի Հայոց

—  
1861.







## Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ւ Ն

### Ա Ս Տ ՈՒ Ա Ծ Ա Շ ՈՒ Ն Զ Ս ՈՒ Ր Բ Գ Ր Ո Ց

#### Գ Ա Ս Վ Ե Շ Տ Ա Ս Ա Ն Ե Ր Ո Ր Գ .



ըբոր Իսրայելացիք Կադէս ըսուած տեղը հասան, Մովսեսի քոյրը Մարիամ հոն վախճանեցաւ ու Թաղուեցաւ: Մովսեսէն տասը կամ տասուերկու տարի մեծ էր, եւ ըստ կարծեաց ոմանց իսուրբ Հարց' կուսակրօն մնացած էր: Ժողովուրդը սուգ մտաւ Մարիամու մահուանը համար, իբր Թէ ցաւակցուածին ցուցնելով Մովսեսի եւ Ահարոնի. բայց շատ չանցաւ, դարձեալ յայտնի ըրաւ իւր ապերախտութիւնը:

Կադեսին մէջ խմելու ջուր չկար: Թափեցան Իսրայելացիք Մովսեսի ու Ահարոնի գլուխն ու ըսին տրտնջելով Թէ « Երանի Թէ մեք ալ մեր եղբարցը հետ մեռած գնացած լինէինք. ի՞նչ ըսիք ու հանեցիք զմեզ Եփատոսէն. ի՞նչ ըսիք ու այս անապատը բերիք զմեզ, այսպիսի տեղ մը որ ոչ հիւնտ կցանուի, ոչ սեխ, ոչ այգի կտրնկուի, ոչ նռնենի, եւ ոչ իսկ խմելու ջուր կայ»: Մովսէս եւ Ահարոն գնացին վկայութեան խորանին առջեւն ընկան երկրպագութիւն ըրին. Աստուած ալ ըսաւ Մովսեսի Թէ « Ժողովուրդը ժողովէ, գաւազանդ ալ առ, ու գնացէք Ահարոնին հետ Ժայռին գլուխը. հրաման ըրէք Ժայռին, ջուր կբբիս, ժողովուրդը Թող խմէ կշտանայ»:

Մովսէս կանչեց տարաւ ժողովուրդը այն ժայռին քովը. բայց այնչափ նեղացեր էր արդարոյն սիրտը ժողովրդեան մինչեւ այն ատեն ցուցուցած ապերախտութեանն ու ըրած անհաւատութեանցը վրայ որ դարձաւ ըսաւ անոնց թէ «Մտիկ ըրէք, անհաւատ մարդիկ. միթէ դուք արժանի՞ էք որ այս քարէն ջուր ելլէ ձեզի: — Լուարուք ինձ անհաւանք. միթէ իվիմէս յայսմանէ հանիցե՞մք ձեզ ջուր»: Մարդուս հաւատքին առջեւը անկարելի բան չկայ, երբոր Աստուած ալ կամենայ նորա կամքը կատարել. բայց երբոր հաւատքը պակսի, կարելին անկարելի կդառնայ, դիւրինն ալ դժուարին: Մովսէսի հաւատքը մեծ էր եւ զօրաւոր. բայց ժողովրդեան անհաւատութեանը նայելով՝ տարակուսեցաւ թէ արդեօք Աստուած պիտի կատարէ՞ նոցա խնդիրքը այս անգամ, ու պիտի լեցընէ՞ նոցա կարօտութիւնը: Գաւազանը վեր վերցուց, զարկաւ քարին, ջուր չեկաւ. պէտք եղաւ որ մէյմ՝ալ գարնէ, եւ առատ ջուր վազեց, բոլոր ժողովուրդը եւ նոցա անասունները խմեցին կշտացան:

Մովսէսի եւ Ահարոնի ցուցուցած տարակոյսը թէպէտ եւ մեղանչական թերահաւատութիւն չե՛րեւիր, բայց ժողովրդեան գայթակղութեան պատճառ եղաւ, եւ Աստուծոյ ամենակարող զօրութեանն ու հրամանին վրայ երկբայածի պէս եղան. ասոր համար ըսաւ նոցա Աստուած թէ «Որովհետեւ հաստատուն հաւատքով չկատարեցիք իմ խօսքս, եւ ժողովրդեան առջեւը չպահեցիք իմ պատիւս, անոր համար պիտի չտանիք այդ ժողովուրդը իրենց խոստացած երկիրս: — Ի՛նչ սոսկալի խրատ եւ յանդիմանութիւն այն գլխաւորաց ժողովրդեան որ իրենց վարքովն ու խօսքերովը մեծ կամ փոքր երեւցած բաներու մէջ թեթեւահաւատ կերեւնան ու գայթակղութիւն կուտան տգէտներուն ու խեղճերուն, եւս եւ մեղաւորներուն: — Այն ջրին թխած աղբիւրը ջուր բամբասանաց կամ ջուր հակառակութեան ըսուեցաւ:

Երբոր Իսրայելացիք եդովմայեցուց երկրին սահմանը հասան, Աստուած իմացուց Մովսէսի որ Ահարոնին վախճանելու ատենը եկեր է: Մովսէս Աստուծոյ հրամանովը հետը առաւ Ահարոնն ու անոր եղիազար որդին, ու ժողովրդեան առ-



ջեւը՝ ելաւ Հովր ըսուած լեռան գլուխը: Հոն Ահարոնին քահանայապետական զգեստները հանեց՝ եղիազարու հագցուցուց: Ահարոն վախճանեցաւ հարիւր քսանուիրեք տարեկան, Մովսէս ու եղիազար ալ Թաղեցին զինքը այրի մը մէջ ու լեռնէն վար իջան: Ժողովուրդն որ լսեց, երեսուն օր սուգ մտաւ Ահարոնին համար:

Հովր լեռնէն ճամբայ ելան Իսրայելացիք ու դէպի Կարմիր ծովը գնացին: Այն միջոցին նորէն որ սկսան գանգատիլ Աստուծոյ եւ Մովսէսի դէմ, ըսելով Թէ «Ոչ ուտելու հաց ունիմք, ոչ խմելու ջուր, եւ այս անպիտան հացէն — ըսել կուզէին Թէ մանանայէն — ձանձրացանք տաղտկացանք», Աստուած պատժեց զիրենք՝ Թունաւոր օծեր զըկելով մէջերնին որ խածածոնին կմեռցնէին, եւ շատ մարդ մեռաւ այն կերպով: Իսկ երբոր մեղայ՝ ըսին Աստուծոյ Մովսէսի առջեւը, եւ խնդրեցին որ աղօթք ընէ Աստուծոյ որ դադրի իրենց վրայէն այն սոսկալի պատուհասը, Մովսէս Աստուծոյ հրամանովը պղնձէ օձ մը շինեց ու ձողի վրայ տնկած՝ Ժողովուրդեան մէջ բարձրացուց. օձէ զարնուողներուն մէջէն ով որ այն պղնձէ օձին վրայ կնայէր՝ կառողջանար: — Այս ձողի վրայ բարձրացած պղնձէ օձը օրինակ կրերէ Քրիստոս Տէրն մեր իրեն փրկարար Խաչելութեանը. եւ սուրբ եկեղեցին զսուրբ Խաչը եւ զխաչելեալ Փրկիչն մեր հաւատացելոց առջեւը դնելով՝ կհաւատայ ու կհաւատացնէ որ աներեւոյթ օձին խածուածքէն հիւանդացած, այսինքն մեղքի մէջ ընկած հոգիները անոր վրայ նայելով՝ կբժշկուին իրենց հոգեւոր ու մահացու ախտերէն: Այս օրինակով այն ալ կհասկըցուի Թէ ուրեմն շատ կարխալին այն մարդիկն որ կարծեն Թէ պատկերի կամ խաչի կամ խաչելութեան առջեւը աղօթք ընելը աւելորդ բան է, աւելորդապաշտութիւն է: Յայտնի բան է որ այն նիւթական պղնձէ օձը չէր բժշկութիւն տուողը, հապա պղնձէ օձին վրայ նայեցէք որ բժշկութիւն գտնէք ըսողը՝ Աստուած. այսպէս ալ ամենայն քրիստոնէայք երբոր խաչի կամ պատկերի մը առջեւ աղօթք կընեն, մտքերնին ոչ Թէ այն նիւթական պատկերին կամ խաչին պիտի կապեն, որ իբր Թէ անո՛նց վրայ է հրաշագործ զօրութիւնը, հապա այն



պատկերներուն մեր միտքը ձգած սուրբերուն եւ Քրիստոսի Տեառն մերոյ ոյժն է որ մեզի օգնութեան կիսանի՝ մեր հաւատքին մեծութեանը համեմատ կերպով: Մովսեսին կանգնած պղնձէ օձը մնաց Իսրայելացւոց մէջ մինչեւ բարեպաշտ եզեկիա Թագաւորին օրերը: Այն Թագաւորը տեսնելով որ Հրեայք անոր երկըրպագութիւններ ընելով ու զոհեր մատուցանելով կռապաշտութիւն կընեն, առաւ կոտորտեց ու փճացուց: Ասով կիմացուի Թէ ո՛րչափ անտեղի բան է այն՝ որ Իտալիոյ Միլան քաղաքին սուրբ Ամբրոսիոս եկեղեցւոյն մէջ մինչեւ ցայժմ պղնձէ օձ մը կցուցընեն, ու այնպէս կիաւատացընեն ժողովրդեան որ իբր Թէ Մովսեսի կանգնածն է. որ հակառակ կելնէ Աստուածաշնչին պատմութեանը:

Իսրայելացիք Քանանացւոց երկիրը մտնելու համար՝ պէտք էր որ քանի մը այլազգի ժողովուրդներու մէջէ անցնէին: Մովսէս մարդը դրկեց նոցա Թագաւորներուն ու ինդրեց որ ճամբայ տան իրեն, խոստանալով որ վնաս մը չհասցընէ երկիրներուն. բայց նոքա մտիկ չըրին, ճամբայ չտուին. ոմանք ալ պատերազմով Իսրայելացւոց դէմ ելան, ինչպէս Ամօրիացւոց Սեհոն Թագաւորը, եւ Բասանու Ովգ Թագաւորը: Մովսէս Աստուծոյ հրամանովը պատերազմեցաւ հետերնին, յաղթեց անոնց, գրեթէ բոլոր ժողովուրդները Թրէ անցուց, ու նոցա երկրին տիրապետեց:

Երբոր Իսրայելացիք Յորդանան գետին եզերքը հասան՝ բանակ դրին, Մովսէսացւոց Բաղակ Թագաւորը մեծ վախի մէջ ընկաւ: Բաղամ անուէնով մէկը կար այն կողմերը՝ սուտ մարգարէ, կամ Թէ — ինչպէս որ ուրիշները կարծիք կընեն — Յշմարիտ մարգարէ աստուածապաշտ, բայց շահասէր մարդ. գուցէ այն տեսակ մարգարէներէն որ Աւետարանին մէջ Քրիստոսի Տեառն մերոյ ըսածին պէս՝ վերջի դատաստանին օրը պիտի ըսեն Աստուծոյ Թէ «Տէր տէր, ո՛չ յանուն քո մարգարէացաք. — Տէր Աստուած, մի՞թէ մեք քու անունովը չէ՞ր որ մարգարէութիւններ ըրինք». ու պատասխան պիտի լսեն Թէ «ես զձեզ չեմ ճանչնար, ինձմէ հեռո՛ւ զնացէք»: Բաղակ Թագաւորը այն Բաղամ մարգարէն կանչեց որ գայ Իսրայելացիները անիծէ, որ-



պէս զի ըսաւ՝ «Կարենամ ես յաղթել նոցա եւ երկրէս հեռացընել. վասն զի գիտեմ որ քու օրհնածդ օրհնած է, անիծածըդ անիծած»:

Բաղամ սիրով ընդունեցաւ Բաղակայ իշխանները, նոցա բերած ընծաներն առաւ, ու «Այս գիշերը հոս կեցեք, վաղը ձեզի պատասխան կուտամ» ըսաւ: Գիշերը Աստուած ապսպրեց Բաղամու որ չերթայ. նա ալ առաւօտը Բաղակայ իշխանները ետ գամբեց: Բաղակ նորէն մարդ դրկեց Բաղամայ՝ առաջիններէն աւելի պատուաւոր իշխաններ, որ խօսք անցընեն ու առնուն բերեն զինքը. «Ի՞նչ ալ ուզես կուտամ» ըսաւ: Բաղամ պատասխան տուաւ թէ «Բաղակ ինձի մէկ տուն մը լեցուն ոսկի ու արծաթ ալ տայ՝ ես Աստուծոյ հրամանին դէմ բան չեմ ըներ»: Այն գիշերն որ հոն կեցան մարդիկը, Աստուած ըսաւ Բաղամու թէ «Ել գնա այդ մարդկանց հետ, բայց ինչ որ ես ապսպրեմ քեզի՝ այն ընես»:

Առաւօտը ելաւ Բաղամ, էշը հեծաւ, գամբայ ելաւ, ու կերեւնայ թէ միտքը փոխեց, կուզէր Բաղակայ կամքը կատարել ու Իսրայելացւոց անէծք տալ: Այս անկէց ալ յայտնի է, որ կըսէ Աստուածաշունչը թէ «Եւ բարկացաւ Աստուած սրբամտութեամբ ընդ երթալն նորա»: Հրեշտակ մը ելաւ դիմացն ու սկսաւ արգիլել որ առաջ չերթայ: Ոչ Բաղամ կտեսնէր հրեշտակը եւ ոչ քովի երկու ծառաները՝ որ հետը կերթային. բայց էշը տեսաւ, ու գամբէն դուրս ելաւ: Երբոր Բաղամ սաստիկ ծեծելով դարձուց էշն ու այգիներուն առուամէջէն՝ փոս ու նեղ գամբէն կքըշէր, էշը հրեշտակին վախէն դարձեալ մէկդի քաշուեցաւ, ու Բաղամայ ոտքը տարաւ պատին ճզմեց: Բաղամ նորէն որ սկսաւ ծեծել էշը անգութաբար, էշը չկրնալով ոչ աջ երթալ եւ ոչ ձախ՝ նստաւ Բաղամին տակը. Աստուած ալ բացաւ էշուն բերանը. դարձաւ ըսաւ Բաղամու թէ «Ի՞նչ ըրի ես քեզի որ այս երեք անգամ է՝ կծեծես զիս չարաչար»:

Բաղամին բարկութենէն աչքը մուծ կոխած՝ ուշ չդրաւ այն կարգէ դուրս նշանին՝ որով անբան անասունը հետը խօսակցութիւն կընէր. իսկոյն պատասխանեց թէ «Անոր համար կը-



ծեծեմ որ զիս ծաղր ըրիր. ու թէ որ թուր մը լինէր ձեռքս, հիմա զքեզ կզարնէի կմեռցընէի: — Ես քու այն էշդ չե՞մ որ իմանկուծեմնէ վրաս կհեծնէիր. օր մը այսպէս քեզի դէմ կեցած ունի՞մ:— Ոչ, ըսաւ Բաղամ: Աչքն ալ բացուեցաւ, տեսաւ որ հրեշտակը ձեռքը թուր մը բռնած՝ առջեւը կեցեր՝ արգելք կընէ. մէկէն ընկաւ առջեւը երկրպագութիւն ըրաւ. «Մեղայ՛, ըսաւ, չէի գիտեր որ դուն ես ինձի արգելք ընողը. թէ որ չես ուզեր երթալ՝ ետ կդառնամ»: Հրեշտակը պատասխասն տուաւ թէ «Գնա, բայց ի՞նչպէս որ ըսեմ քեզի՛ այնպէս խօսէ»:

Բաղակ թագաւորը Բաղամին գալը լսելուն պէս՝ մինչեւ հեռու տեղ առջեւը գնաց պատուով, ու մեղադրեց որ կանչածին պէս՝ չեկաւ. «Ձէ նէ մի վախցար որ պէտք եղած պատիւը պիտի չընեմ քեզի», ըսաւ: Բաղամ պատասխան տուաւ թէ «Գալովս ի՞նչ կլինի. ահա հիմա եկեր եմ, բայց ո՞չ ապաքէն Աստուած ի՞նչ որ բերանս դնէ՛ այն պիտի խօսիմ»: Բաղակ առաւ Բաղամը բարձր տեղ մը հանեց, ուսկից որ Իսրայելացւոց բանակին մէկ մասը կտեսնուէր. անոր խօսքովը զոհեր պատրաստեց, ու խնդրեց որ անիծէ Իսրայելացիները: Բայց Բաղամ բերանը օրհնենքով բացաւ, օրհնենքով փակեց. «Աստուծոյ օրհնած ժողովուրդը ես ո՞վ եմ որ անիծեմ, ըսաւ. ես նորա համար կեանքս կուտամ. երանի՛ թէ իմ զաւակս ալ Իսրայելի զաւակին պէս լինէր»: Բաղակ նեղացաւ Բաղամու վրայ. առաւ մէկ ուրիշ տեղ մը տարաւ զինքը ու անկէց ցուցուց ժողովրդեան մէկ մասն որ անիծէ: Բաղամ նորէն օրհնենքներ տրւաւ: Դարձաւ ըսաւ Բաղակ թէ «Ոչ օրհնելը պէտք է ինձի, եւ ոչ անիծելը»: Բաղամ պատասխանեց թէ «Արդէն ըսի ես քեզի որ Աստուած ինչ որ դնէ բերանս՝ այն պիտի ըսեմ»:

Երբոր երբորդ անգամ ալ խնդրեց Բաղակ որ անիծէ Իսրայելացիները, Բաղամ աւելի ալ շատցուց օրհնենքներն ու մարգարէական խօսքերով գուշակեց Իսրայելացւոց ատենով մեծնալը զօրանալը՝ մարմնաւոր եւ հոգեւոր իշխանութեամբ, այլազգիներուն յաղթուիլը, եւ Քրիստոսի Տեառն մերոյ մարդեղութեամբը մարդկային ազգիս փրկութեան հասնելիքը:

Բաղակ զԲաղամ իւր տեղը ճամբելէն ետեւ, ուրիշ սատար



Նայական հնարքով մը ուզեց յաղթել Իսրայելացւոց, Թերեւս Բաղաամու չար խորհրդովը, եւ գրեթէ յաջողեցաւ: Այնպէս ըրաւ որ իւր ժողովուրդը՝ Մովաբացիք՝ սէր ցուցնեն Իսրայելացւոց, եւ հետերնին խնամութիւններ ընեն. Իսրայելացիք ալ այնչափ խաբուեցան որ մինչեւ մէջերէն ոմանք նոցա կուռքերուն երկրպագութիւն ըրին, ու իրենք զիրենք Բելփեգովը ըսուած կուռքին նուիրեցին: Այն ապստամբները Մովսեսի հրամանովը Թրէ անցուեցան. եւ Փենեհէս քահանայն՝ եղիազարու որդին՝ տեսնելով որ ժողովրդէն մէկը Մադիանացի կին մը առեր իրեն հարս կ'ընէ՝ վեր ցատքեց, գեղարդովը զարկաւ հարսն ալ փեսան ալ սպաննեց. եւ այս իւր նախանձայոյզ աստուածպաշտութեամբը Աստուծոյ բարկութիւնը իջեցուց:

Յետոյ Մովսէս Աստուծոյ հրամանովը պատերազմի ելաւ Մադիանացւոց վրայ: Փենեհէս գնաց տասուերկու հազար զօրքով յաղթեց Մադիանացւոց, նոցա բոլոր մանչ տղայքը Թրէ անցուց, եւ հինգ իշխանը սպաննեց. անզգամ Բաղաամն ալ հետերնին:

Պատերազմէն ետքը Ռուբենի ու Գադայ ցեղերը, Մանասէի ցեղին ալ կէսը եկան խնդրեցին Մովսէսէն որ Ամովրիացւոց ձեռքէն առնուած երկիրները իրենց բաժնէ. Մովսէս ալ հաւանեցաւ, բայց այս խօսքով որ առաջ իրենք ալ Յորդանանէն անցնին դիմաց, օգնեն իրենց եղբարցը՝ Քանանացւոց երկրին տիրելու, ու ետքը դառնան գան ժառանգելու իրենց տրուած երկիրը:

Իսրայելացւոց եգիպտոսէն ելածը քառասուն տարի ու քանի մը ամիս եղած էր: Մովսէս գիտնալով որ ինքը Յորդանանէն անդին անցնելու չէ, եւ վախճանելու օրերը մօտեցեր են, ժողովրդեան առջեւը երկայն երկայն խրատներով պատմեց բոլոր իրենց գլխէն անցածները՝ եգիպտոսէն ելածներէն իվեր: Նոցա տուած օրէնքները նորէն կրկնեց, խօսք առաւ ժողովրդեան գլխաւորներէն որ հաստատ կենան իրենց աստուածպաշտութեանը մէջ. օրինապահ ու հաւատարիմ Իսրայելացւոց մեծամեծ յաջողութիւններ, եւ անհաւատներուն ու չարագործներուն սոսկալի պատիժներ խոստացաւ. օրէնքներուն մէկ օրինակը յանձնեց քահանաներուն ու ծերերուն՝ ապսպրե-



լով որ եօթը տարին մէյմը ծայրէ ծայր կարգան ժողովրդեան: Յետոյ մէկ գեղեցիկ օրհնութիւն մը շարադրեց, որ Իսրայելացւոց գլխէն անցնելու բաներուն գրեթէ մարգարէութիւնն էր: Այս օրհնութեան գլխաւոր իմաստներուն մէկ գաշակն այս է.

Մըտիկ ըրէք, ո՛վ երկինք, նայեցէք ես ի՛նչ կըսեմ.

եւ դու երկիր՝ ցօղի պէս ընդունէ խօսքս վըսեմ.

ես Աստուծոյ անունովն է որ կուտամ ձեզ յորդոր,

նորա գործքերն յիշեցէք ու փառք տըւէք դուք անոր:

Հօրըդ հարցուր որ պատմէ, թող ըսեն քու ծերերըդ

թէ ո՛րքան մեծ բարիքներ ըրաւ քզի քու Տէրըդ.

Քարէն քզի մեղը հանեց, ապառաժէն անուշ իւղ,

Կաթ ու կարագ քեզ կերուց, ազնիւ ցորեն եւ խաղող:

Կերար Յակոբ, կըշտացար, ոտքով զարկիր սիրելոյդ,

Դիրացա՛ր ու հաստըցար, ու դէմ ելար Տիրօջըդ.

Ըզքեզ ծընող կերակրող Տէրըդ մոռցար թողուցիր,

Օտարոտի աստուածներ, կուռքեր, դիւանք պաշտեցիր:

Տեսաւ Աստուած ըրածըդ, նախանձեցաւ բարկութեամբ,

Ջրգեց ըզքեզ երեսէ որ խըրատուիս խեղճութեամբ.

Դուն շարժեցիր նախանձըս՝ ինծի դէմ կուռք պաշտելով,

ես ալ ըզքեզ չարչարեմ անմիտ ազգի մը ձեռքով:

Կըրակ ու բոց դարձեր է իմ բարկութիւնըս վըրադ,

Լեռներ ձորեր կըլափէ, եւ ըզքե՛զ ա՛զգ անխըրատ.

Դըրսէն ըզքեզ կոտորէ անողորմ թուր թըշնամեաց,

Ներսէն վախն ու արհաւիրք՝ ծերն ու տըղայն ըստընդեաց:



Ազգ' արդարեւ անիմաստ, ազգ' յիրաւի անխորհուրդ,  
Զըհասկըցար թէ ի՞նչպէս դուն մէկ տըկար ժողովուրդ  
Հազարաւոր ազգերը դարձընէիր իփախուստ  
Թէ որ քեզի օգնութիւն չընդունէիր իվերուստ:

Ոչ, ո՛չ նոցա կուռքերը մեր Աստուծոյն են նըման,  
Եւ ոչ նոցա քաջերը մեր քաջերուն են նըման.

Իրենց այգին է՛ այգի Սողոմ Գոմոր քաղաքաց,

Իրենց խաղողը լեղի, գինին է թոյն վիշապաց:

Սակայն ամօ՛թ երեսին. զանոնք պաշտեց Իսրայէլ.

Բայց օ՛ր կուգայ որ ճանչնայ թէ մեծ յանցանք է արել.

Այն աստուածներն որ պաշտեց՝ ո՞ւր կըմընան այն ատեն,  
Տառապանաց օրերը ի՞նչպէս իրեն պիտ' օգնեն:

Տեսէք, տեսէք որ ես եմ, եւ բաց յինէն Տէր չըկայ.

Ես կըսպաննեմ՝ կեանք կուտամ, ձեռքէս հանող մը չըկայ.

Ձեռքս որ երկինք վերցընեմ, աջիս վըրայ երդուըննամ,

Թուրըս փայլակ կըդառնայ, թըշնամեաց վըէժը կուտամ:

Իմ նետերուս խըմածը իմ ատելեացս արիւնն է,

Իմ թըրերուս կերածը թշնամեաց միսն ու իւղն է.

Իսրայելի հետ մէկտեղ ազգք եւ ազինք թող ցընծան,

Ամէն հրեշտակք Աստուծոյ լինին իրեն օգնական:

Այս օրհնութենէն զատ՝ մահուանէն քիչ մը առաջ Մովսէս  
Իսրայելացւոց ամէն մէկ ցեղին անուևովը մէկմէկ մարգարէա-  
կան օրհնեմքներ տուաւ: Միայն Շմաւոնին անուևը չկայ անոնց  
մէջ. եւ այս բանիս պատճառը չգիտցուիր:

Վերջապէս ելաւ Մովսէս Աստուծոյ հրամանովը նաբաւ լե-  
ւան վըայ, որ երիքովին դիմացը կիյնայ: Հոն ցուցուց անոր  
Աստուած բոլըր Քանանացւոց երկիրն ու ըսաւ թէ «Ահա այս է



այն երկիրն որ ես ձեր հարցը խոստացայ՝ նոցա որդւոցը տալու . բայց դուն հոն չես մտներ» : Հարիւր քսան տարեկան ատենը վախճանեցաւ Մովսէս , ու ոչ աչքին ոյժը գնացեր էր եւ ոչ երեսը խորշոմուծիւն ընկեր էր : Մովսէսի մարմինը նաբաւ լեռան վրայ թաղուեցաւ , ու գերեզմանը անյայտ մնաց , որպէս զի Իսրայելացիք Աստուծոյ տեղ դնելով՝ չպաշտեն զինքը : Տեղը յաջորդեց իրեն սպասաւորը Յեսու նաւեայ , ինչպէս որ Աստուած Մովսէսի յայտներ ու ապսպրեր էր :

Աստուածաշունչ սուրբ գիրքը լեցուն է Մովսէս մարգարէին գովասանքներովը . եւ յիրաւի . իրեն պէս ճշմարիտ եւ ճիշդ օրինակ Քրիստոսի Տեառն մերոյ , — որ փրկեց զմարդիկ մեղաց գերութենէն ու յաւիտենական արքայութեան դռները բացաւ մեզի , — չէ երեւցած հին Կտակարանին մէջ : Այս մեծ ու իմաստուն օրէնսդիրը , այս աստուածատես մարգարէն , իրաւամբ պատկառելի ու մեծարելի է մինչեւ ցայժմ Հրէից ազգին , եւ եւս առաւել ամենայն քրիստոնէից , իբրեւ հրաշալի գործիք նախախնամութեանն Աստուծոյ , եւ զօրաւոր միջնորդ Աստուծոյ եւ մարդկան : Հրեայք գոհ չլինելով Աստուածաշնչին Մովսէսի տուած գովեստներովը , ուրիշ շատ զարմանալի պատմութիւններ ալ հնարեր են ու կպատմեն Մովսէսի վրայ որ այս տեղ յիշատակելը աւելորդ կհամարիմք : Բայց իրենք աւելի լաւ կընէին անշուշտ՝ թէ որ մտիկ ընէին Մովսէսի այն խօսքին որ ըսեր էր իրենց թէ « Մարգարէ յարուսցէ ձեզ Տէր Աստուած ձեր իբրեւ զիս , նմա լուիջիք . — Աստուած ինձի պէս եւ ինձմէ աւելի հրաշագործ եւ նոր նոր օրէնքներ դնող մարգարէ մը պիտի հանէ ձեր մէջ . անո՛ր մտիկ ըրէք , նորա խօսքէն դուրս չելնէք . » որ յայտնի Քրիստոսի Տեառն մերոյ համար էր : Մեզի ալ հարկաւոր խրատը այս է որ չմոռնամք թէ Քրիստոս Տէրն մեր Մովսէսի դրած օրէնքները մեզի համար կատարելագործեց ու սովորեցուց մեզի , եւ անտրտունջ յօժարութեամբ աւետարանական սուրբ օրէնքները պահեմք , որպէս զի աշխարհիս անապատին մէջ առանց փորձանաց եւ հոգեւոր պատիժներու՝ մեր անցաւոր կեանքը անցընելէն ետեւ , ճշմարիտ աւետեաց երկիրը ժառանգեմք :

Մովսէս մարգարէն , ինչպէս որ ուրիշ անգամ ալ յիշեցինք ,



Աստուածաշնչին մէջի առաջին հինգ գիրքը շարադրած է, որ են Ծնունդը, Ելք, Դեւտական, Թիւք եւ Երկրորդ օրէնք: Այս հինգ գրքէն առինք ահա մեք ալ ինչոր մինչեւ ցայժմ պատմեցինք ձեզի, պատուական ժողովականք: Եւ որովհետեւ եկաւ հասաւ ժամանակն որ այս ձմեռուան լսարանները տաղ-րին, մեք ալ այս տեղս դադրեցընեմք սուրբ գրոց պատմութեան դասախօսութիւնը, յուսալով որ աւելի եռանդեամբ եւ աւելի օգտակար կերպով առաջ տանիմք զայն Աստուծով՝ Հոկտեմբեր ամսոյն կիրակիներէն մինչեւ գալ տարուան սուրբ Ջատիկը: *Ճողովման արձակուրդի միջոցաւ քոյստութիւն — զձեզայ*

Մեր եռանդեան աւելնալուն մի միայն պատճառ՝ ձեր սիրով եւ յօժարութեամբ գալն է այս դասախօսութիւնները մտիկ ընելու, եւ տարակոյս չունիմք որ պիտի աւելնայ հետ զհետէ այս մեր եռանդը: Իսկ լսարանին օգտակարութիւնը աւելցընելը՝ մեր պարտքն է, ջանալով որ ոչ միայն դասախօսութեան նիւթերը օգտակար ու հետաքրքրական լինին, այլ եւ նոցա բացատրութիւնը որչափ որ կարելի է պարզախօս եւ դիւրիմաց:

Առաջին տարուանս մէջ եղած լսարանէն տեսանք ամէնքս ալ թէ ո՛րչափ ախորժելի են Աստուածաշնչի պատմութիւնը, Մտավարժութեան դասերը, Ընդհանուր աշխարհագրութիւնը եւ Ընդհանուր պատմութիւնը, երբոր պատմուին աւելի իբրեւ ընտանեկան խօսակցութիւն, քան թէ ուսումնական վարդապետութիւն: Բայց այս ախորժը հաստատ պահելու համար՝ երկու մեծամեծ դժուարութիւններ կային առջեւնիս, մէկը ձեզի համար, եւ միւսը մեզի. սակայն երկուքին ալ յաղթելու վարժեցանք:

Ձեզի համար եղած դժուարութիւնն այս էր որ գործնական կերպով համոզուիք թէ այս լսարանին մէջ եղած եւ լինելի խօսակցութիւնները ոչ դաս կամ համար են որ վախճաք ու ըսէք թէ «Մեք ի՛նչպէս նոր քան պիտի սովորիմք՝ տարիքներս որը քիչ որը շատ առած լինելով»: Եւ ոչ քարոզ կամ լոկ խորատներ են որ ըսէք թէ «Քարոզին շատէն կամ խրատին երկայնէն համ չառնուիր»:—Իսկ մեր քաշած դժուարութիւնը այն էր որ լսարանին դասերը ոչ անօգուտ ընեմք ձեզի եւ ոչ ձանձրալի:



եւ ահա այս դժուարութեանց ըստ բաւականին յաղթուիլն է որ մեծ յոյս կուտայ մեզի թէ երկրորդ տարուան լսարանը աւելի ալ քաղցրանայ ձեզի եւ դիւրանայ մեզի: Պիտի ջանամք անշուշտ՝ որ այս օգտակար կրթութիւնը մտնէ նաեւ ամէն տեղ, եւ մանաւանդ մեր վիճակին գլխաւոր քաղաքներն ալ. բայց սորա օգտակարութիւնը պէտք է որ նախ թէոդոսիոյ Լսարանին վրայ տեսնեն ուրիշները, եւ ըստ այնմ բարի նախանձով վառուիլն: Եթէ գտնուիլն յանկարծ նաեւ չար նախանձով նայողներ այս բարի եւ գովելի ձեռնարկութեան վրայ, — որ չեմք կարծեր, — թէոդոսիոյ Լսարանին ժողովականներուն եռանդը տեսնելով՝ կշտամբուիլն ու ամբջնան:





















76

0023390

2013



